



ՁԵՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Ապահովագրված անձն իրավունք ունի՝
 - ապահովագրական ընկերությունից ստանալու տեղեկատվություն պայմանագրի՝ իրեն վերաբերող դրույթների, ծրագրում ներառված բժշկական կազմակերպությունների վերաբերյալ,
 - պայմանագրով սահմանված կարգով ստանալու պայմանագրով նախատեսված ծառայությունները,
 - պայմանագրին համապատասխան պահանջելու բժշկական օգնության և ծառայությունների տրամադրում՝ բժշկական կազմակերպություններից,
 - ապահովագրական ընկերության կողմից բժշկական ծառայության տրամադրումը մերժելու դեպքում՝ կայացված որոշումը վերանայելու և լրացուցիչ պարզաբանումներ ստանալու նպատակով ապահովագրական ընկերությանը ներկայացնելու ապահովագրական հատուցման դիմում: *(Հատուցման դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը սրանալուց հետո ապահովագրական ընկերությունը պարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում ընդունել ապահովագրական հատուցման մասին գրավոր որոշում:)*
 - օգտվելու Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և ապահովագրության պայմանագրով նախատեսված այլ իրավունքներից:
2. Ապահովագրված անձը պարտավոր է՝
 - Ապահովագրության պայմանագրով նախատեսված բժշկական ծառայությունների¹ ստացման համար բժշկական կազմակերպություն դիմելիս հեռախոսազանգով (098 277 288 կամ 010 53 64 94 հեռախոսահամարով) ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում տեղեկացնել ապահովագրական ընկերությանը: Շտապ և անհետաձգելի բժշկական օգնություն պահանջող դեպքերում ապահովագրական ընկերությանը տեղեկացնելու պարտավորությունը ծագում է բժշկական կազմակերպություն դիմելուց հետո՝ առաջին իսկ հնարավորության դեպքում:
 - Ապահովագրության պայմանագրով նախատեսված ծառայություններից օգտվելու համար դիմել բացառապես Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2017 թվականի սեպտեմբերի 1-ի N 2621-Ա հրամանով հաստատված ցանկում (Հավելված 5) ընդգրկված բժշկական կազմակերպություններ՝ ներկայացնելով անձը հաստատող փաստաթուղթ (2018 թվականի ապրիլի 01-ից՝ նույնականացման քարտ),
 - ապահովագրական ընկերությանը տրամադրել իրավունք՝ ծանոթանալու իրեն վերաբերող բժշկական փաստաթղթերի, տեղեկությունների հետ, որոնք անհրաժեշտ են ապահովագրության պայմանագրի կատարման և ապահովագրական հատուցման որոշման կայացման համար,
 - կատարել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և ապահովագրության պայմանագրով նախատեսված այլ պարտավորություններ:

Ապահովագրական ընկերությունն իրավունք ունի մերժելու ապահովագրական հատուցման վճարումը, եթե Դուք չեք կատարել ապահովագրության պայմանագրով սահմանված Ձեր պարտականությունները կամ խախտել եք ապահովագրության պայմանագրով նախատեսված ծառայություններ ստանալու՝ պայմանագրով սահմանված կարգը, ժամկետները:

Ապահովագրական պատահարի մասին ուշ տեղեկանալու կամ չտեղեկանալու հիմքով ապահովագրական ընկերությունն իրավունք չունի մերժելու հատուցման վճարումը, եթե նա ժամանակին իմացել է ապահովագրական պատահարի վրա հասնելու մասին կամ, որ այդ մասին տեղեկությունների բացակայությունը չէր կարող ազդել ապահովագրական հատուցում վճարելու նրա պարտականության վրա:

¹ Միայն ապահովագրության պայմանագրով նախատեսված ծառայություններ ստանալու դեպքերում: Եթե օրինակ որոշակի գանգատով դիմում եք բժշկի՝ ամբուլատոր խորհրդատվություն ստանալու համար, ապա այդ դեպքում ապահովագրական ընկերությանը գանգահարելու անհրաժեշտություն չկա, քանի որ ամբուլատոր բուժօգնությունը (բացառությամբ հատուկ և դժվարամատչելի հետազոտությունների) պայմանագրով չի տրամադրվում: